

մար եւ կը յաջողի. մանրամասնութիւններն տեսնել (ձպլե. Ա. հտ. էջ 270—276):

ԽԱԶԱՏՈՒՐ ԵՊՍ. ՉՆՔՈՒՇՅԻ.—Մբ. Գրիգոր պարք. Պարոնտէրէն 1618 ին կոնդակով մը Նւ. կը կարգուի Բեթղէհէմի Ս. Ծննդեան վանքին նորոգութեան ծախքերը հոգալու համար. 1620 ին յիշեալ պարք. ին և ուրիշներու հետ Ս. Տեղերու նկատմամբ Լատինաց եւ Հայոց մէջ կատարուած կարգադրութեան թուղթը կ'ստորագրէ եւ կը կնքէ, որուն լուսանկարեալ օրինակը պատրիարքարանի գիւանին մէջ կը գտնուի. այս մասին տեսնել նաև (Սաւադան. էջ 679): 1651 ին յանուն Միաբանութեան ներկայ կը գտնուի Փիլիպպոս կթղ. ի Երուսաղէմի մէջ գումարած ժողովին (Ազգայն. էջ 2457):

ԽԱԶԱՏՈՒՐ ԵՐԷՑ. — Ս. Յակոբ վանքին Ս. Կարապետի պահարանին պատի վրայի արձանագրութեան մէջ կը յիշուի. կը թուի թէ 1459 ին Դաւիթ սրկ. ի և այլոց հետ ուխտաւորութեամբ այցելած է Ս. Յակոբ. (տե՛ս նոյն արձանագրութիւնը. էջ 113):

ԽԱԶԱՏՈՒՐ ԵՐԷՑ. — ՌԶԶ (= 1637) ին Պարոնտէր պարք. ի օրով Ս. Յակոբ վանքին մէջ կ'ընդօրինակէ Եփրեմի լինչպէս նաև Մովսէս քերթողի, Կիւրղի Աղեքսանդրացոյ և Յովհաննու, Վարդանայ Մարթապալայի ազօթքները (ՄԶ. Թ. 1720):

ԽԱԶԱՏՈՒՐ ԷՎԷՐԷԿՅԻ. — Քրձ. կը վախճանի 1893 ին, ի նպաստ Ս. Յակոբի վանքին յիշատակ կը թողու մէկ մթերանոց Երուսաղէմի մէջ:

ԽԱԶԱՏՈՒՐ ԼԱԶԱՐԵԱՆ, ՌՈՒՍԱՀԱՅ. — Որդի Յովակիմ Լազարեանի, որ եղբօրը՝ Յովհաննէսի հետ 1815 ին կը հիմնեն Մոսկուայի Լազարեան ճեմարանը: Խաչատուր Լազարեան՝ սուսական արքունիքին մէջ իր ունեցած ազդեցութեան շնորհիւ՝ մեծ ջանքեր կը թափէ Ս. Յակոբի վանքին աւանդական իրաւանց պաշտպանութեան համար. այդ պատճառաւ 1844 ին Զաքարիա պարք. էն կ'ստանայ Օրհնութեան կոնդակով կենաց փայտի մասունքը պարունակող ոսկիկազն ակամակոռ խաչ մը: Տեսնել մանրամասնութիւնները իր շնորհակալութեան նամակին մէջ 1844 Մայիս 9 թուականով: